

Տ ն տ ե ս ա կ ա ն ն ո թ մ ո ղ ե լ ի պ ա հ ա ն ջ

(Իրավիճակ, սպասումներ, առաջարկներ)

Ն ա խ ա ք ա ն

2018թ.-ի ապրիլ-մայիսին տեղի ունեցած ժողովրդական, խաղաղ, թավշյա հեղափոխությունը նոր էջ բացեց Հայաստանի երրորդ հանրապետության պատմության մեջ, իսկ այդ հեղափոխության առաջին փուլն ավարտվեց 2018թ.-ի դեկտեմբերի 9-ի խորհրդարանական ընտրություններով, որի արդյունքում իշխող քաղաքական ուժը խորհրդարանում ստացավ ժողովրդի բացարձակ քվեն՝ ապահովելով խորհրդարանի անդամների ձայների ավելի քան 70%-ը: Դրանով իսկ քաղաքական իշխանությունն անցավ նոր ուժին: Այս հանգամանքին մեկ անգամ ևս անդրադառնալը պատահական չէ, քանի որ մեզ մոտ տարիների փորձը ցույց տվեց, որ ժողովրդավարացման ծրագիրն իրականություն դարձնելն ավելի բարդ է, քան շուկայական տնտեսակարգ կառուցելը: Այն ինչ արվել էր Հայաստանում տարիների ընթացքում բարեփոխումների անվան տակ, հանուն ինչ-որ կամ մի քանի «վեհ» գաղափարների, իրականում կեղծ-պսևվող ժողովրդավարացման լավագույն նմուշ կարող է լինել:

Թավշյա հեղափոխության երկրորդ փուլը սկսվեց 2019թ.-ի փետրվարի 14-ին՝ Ազգային ժողովի կողմից ՀՀ կառավարության գործունեության 2019-2013 թվականների ծրագրի ընդունմամբ, որը կոչված է ՀՀ-ում իրականացնել տնտեսական հեղափոխություն: Նշված փաստաթուղթը, որպես երկարաժամկետ հեռանկարային զարգացման ծրագիր, կարևորում է ՀՀ կառավարության գործունեության հիմնարար ուղենիշերը. արտաքին և ներքին անվտանգության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարի, ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացու վերաբերյալ, մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսության, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և ենթակառուցվածքների, բարձր տեխնոլոգիաների,

թվայնացման ու ռազմարդյունաբերության, պետական ֆինանսների կառավարման հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ:

Սակայն, ըստ մեզ, տնտեսական հեղափոխությունը նախ և առաջ գաղափարների, մտածողության, տնտեսական կյանքի մասնակիցների վարքագծի հեղափոխություն է, որն էլ, լինելով մի կողմից որպես հասարակական նոր համաձայնագրի արդյունք, մյուս կողմից ինքն է դառնում նոր խաղի կանոններ սահմանող տնտեսավարող-պետություն-սպառող շղթայում: Սա նշանակում է, որ տնտեսական կյանքին վերաբերյալ հարցադումներ անելիս կարևորը ոչ թե նպատակների պարզապես թվարկումն է՝ տարբեր թվերով հիմնավորված, այլ այդ նպատակներին հասնելու ճանապարհները:

Թեև Հայաստանի տնտեսությունն անկախությունից ի վեր բավական փոփոխություններ է կրել, այն ներկայումս կանգնած է հիմնովին վերափոխման բարդ մարտահրավերների առջև: Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնտեսական քաղաքականության գործադրման արդյունքում դեռևս չեն հաղթահարվել արդեն երկու տասնամյակից ավելի անցումային շեմը բոլորած վերափոխումային գործընթացներին ներհատուկ այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են՝ բնակչության ցածր կենսամակարդակն ու եկամուտների գերբևեռացումը, գործազրկությունը, մենաշնորհն ու կլանայնությունը, կոռուպցիոն ռիսկերը, բնակչության միգրացիան, տնտեսության ստվերայնության բարձր աստիճանը: Այս խնդիրների լուծումներն ավելի բարդացան 2008թ-ի համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո, երբ ճգնաժամի հետևանքով Հայաստանի դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ն նվազեց 14.2%-ով, ինչը համաշխարհային մակարդակով ամենամեծ անկումներից էր: Վերջին տարիներին տնտեսության քանակական և որակական զարգացումն անկայուն է եղել, ինչը վկայում է զարգացման նախկին մոդելի սպառման և տնտեսական նոր և արմատական մոդելի անհրաժեշտության մասին: Հայաստանը կանգնած է տնտեսության հիմնովին վերափոխման հրամայականի առջև: Նոր տնտեսական մոդելի անհրաժեշտությունը այլևս անխուսափելի է: Այսպես,

Համաշխարհային բանկի ՀԿ, ԿԱ և Եվրոպայի ծրագրերի ղեկավար Ժենեվա Բոյրաու անդրադառնալով Հայաստանի տնտեսական խնդիրներին նշում է. «Հայաստանն այսօր կարիք ունի տնտեսական նոր բարեփոխումների, հակառակ դեպքում պետությունը համեստ ցուցանիշներ կունենա ՀՆԱ-ի, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշների առումով: **Հայաստանի տնտեսական զարգացման մոդելը իրեն սպառել է:**»

Համաշխարհային տնտեսական ճգնաժամին հաջորդող ժամանակահատվածը ցույց տվեց, որ Հայաստանի տնտեսությունը խոցելի է նաև արտաքին ցնցումներից: Սա պայմանավորված էր մի շարք գործոններով, որոնք ներառում էին ոչ արտահանելի հատվածի (ենթակառուցվածքներ, շինարարություն) անկայուն աճի գործոնները, նեղ շրջանակի ու հումքային գերակայությամբ արտահանումը և արտերկրից մասնավոր տրանսֆերտներից չափազանց մեծ կախվածությունը: Տնտեսության զգալի անկումը զուգակցվեց արտերկրից մասնավոր տրանսֆերտների նշանակալի նվազմամբ, ինչի հետևանքով էլ ավելի մեծացավ աճի նոր շարժիչ ուժեր և ֆինանսավորման ուղիներ փնտրելու անհրաժեշտությունը: Համաշխարհային ճգնաժամն ու նոր տնտեսական իրականությունը նշանակալի դժվարություններ ստեղծեցին Հայաստանի համար: Բյուջետային ծախսերը հոգալու և ֆինանսական ու հարկաբյուջետային կայունությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը ստիպված եղավ հավելյալ արտաքին պարտքային ֆինանսական ռեսուրսներ ներգրավել սուվերեն պարտքի շուկաներից, միջազգային դոնոր կազմակերպություններից և օտարերկրյա կառավարություններից: Արդյունքում ՀՀ պետական պարտքը տասը տարվա ընթացքում ավելացավ ավելի քան չորս անգամ: Հետճգնաժամային շրջանում Հայաստանի ՀՆԱ-ն մտավ վերականգնման փուլ՝ 2010-2016 թթ. գրանցելով տարեկան միջինում 3.5% մեղմ աճի տեմպ: Այս աճը հիմնականում պայմանավորված էր տնտեսության դիվերսիֆիկացման աստիճանի բարձրացմամբ և արտահանման աճով: 2017 թվականի դրությամբ Հայաստանի ՀՆԱ-ն կազմել է 11.3 միլիարդ ԱՄՆ դոլար՝ Հայաստանի դիրքն աշխարհում թողնելով 2007 թվականի մակարդակին: Հետճգնաժամային շրջանում Հայաստանի ՀՆԱ-ի

մասնաբաժինն աշխարհի ՀՆԱ-ում դեռևս չի վերականգնել 2008 թ. մակարդակը (0.018%)՝ 2016 թվականի դրությամբ հասնելով ընդամենը 0.014% -ի:

Ի ր ա վ ի ճ ա կ

Սակայն, ինչպես նշվեց վերևում, ընդհանուր իրավիճակը սկզբունքային վերափոխության չենթարկվեց և կարիք ունեւ արմատական փոփոխության: Դա էլ պարզվեց անհնար է, քանի որ , Հայաստանի Հանրապետությունում տնտեսական խնդիրների լուծման բանալին գտնվում էր, ոչ թե տնտեսական դաշտում, այլ քաղաքական հարթությունում, իսկ քաղաքական որոշում այս հարցում այդպես էլ մինչ 2018 թվականի ապրիլը, մինչ թավշյա հեղափոխությունը, իշխանությունը պատրաստ չէր ընդունել, որի արդյունքում եղավ այն, ինչ եղավ:

Ճգնաճամբ, որում հայտնվել է Հայաստանը պահանջում է անցում զարգացման նոր մոդելի: Այս ճգնաժամից դուրս գալը լինելու է դժվար, ցավոտ, աշխատատար, ժամանակ պահանջող: Հակառակ պարագայում, երկիրը երկար ժամանակ կհայտնվի ստագնացիայի-լճացման վիճակում՝ շարունակելով մնալ աղքատ, անարդյունավետ, անմրցունակ: Այս վիճակին երկիր հասցրել են հիմնականում վատ ինստիտուտները, որոնք ոչ միայն արդյունավետ չեն եղել և չեն կարողացել կատարել իրենց պարտականությունները, շատ դեպքերում նաև կատարել են, սակայն այնպես են դա արել, որ ի վերջո դրանցից օգտվողները- քաղաքացիները դրանց կարիքը հետագայում չեն ունեցել, օրինակ դատական, ընտրական ինստիտուտները, դրանով իսկ և հիմնովին դեգրադացրել են պետական ամբողջ ինստիտուտը:

Օրինակ, նախկին համակարգի պայմաններում ՀՀ բիզնեսը չէր կարող իրեն թույլ տալ շահութաբերության 20-30 %-ից ոչ պակաս մակարդակ, այն դեպքում, երբ զարգացած երկրներում 12%-անոց շահութաբերությունը համարվում է բնական: Այդ բարձր տոկոսը պայմանավորված է եղել լրացուցիչ , տարբեր տեսակի ոչ օրինական վճարումներով, ռիսկերի հետ: Այդպիս եկամտաբերություն հնարավոր է ունենալ կամ հումքային բիզնեսում, կամ մենաշնորհային դիրք ստանալով կամ էլ բարձր

տեխնոլոգիական, ինովացիոն գործունեությամբ զբաղվելով: Ամենավատ ինստիտուտներից է սոցիալական բնագավառում պետական քաղաքականությունը/պատերնալիզմը, սա գալիս է Խորհրդային Միությունից: Թոշակները, առողջապահությունը, կրթությունը պետության կողմից անվճար մատուցվող ծառայություններ են, որոնց նկատմամբ որևէ հսկողություն, անձնական պատասխանատվություն չկա: Վերը նշվածներին կարելի է ավելացնել, սոխպողական բարեգործություն անելը, կապիտալի օֆշորիզացիան՝ հետագայում օրինականացնելու նպատակով: Մինչ այսօր, ինչպես և նախկինում գերակշռում է սպառման գերակայությամբ պայմանավորված տնտեսական աճի մոդելը. եկամուտների ավելացումը (ինչպես աշխատավարձերի բարձրացման, այնպես էլ տրանսֆերտների հաշվին) հանգեցնում է պահանջարկի աճին, ինչն իր հերթին մեծացնում է արտադրության կամ ներմուծումների ծավալները: Նման մոդելի գոյության պայմաններն են. դրամի կայուն փոխարժեքը, բարձր տոկոսադրույքները, բանկային պահուստների բարձր մակարդակը, արտահանման նկատմամբ ներմուծուման գերապատվություն տալը, աշխատուժի արտահանումը (շատ տրանսֆերտներ ստանալու համար) և դրա հետ կապված մարդկանց արտագաղթը, ներքին խնայողությունները ներդրումների վերածելու մեխանիզմների ու ինստիտուտների բացակայությունը, ներդրումային բանկերի ու ֆոնդերի բացակայությունը, տնտեսության մեջ դինամիկ կառուցվածքային փոփոխությունների անհնարիությունը, անուղղակի հարկերի գերակայությունը, հարստության կենտրոնացումը (ավելի արագ, քան թե եկամուտների կենտրոնացումը) և այլն: Մոդելին բնորոշ գծերից է մասնավոր սպառման բարձր տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: Առանձին տարիներին սպառումը նույնիսկ գերազանցել է ՀՆԱ-ն:

Խ ն դ ի ր ն ե ր

ա/ Տնտեսության համարյա բոլոր ճյուղերում կառավարման, ինչպես նաև զարգացման հեռանկարների առումով շարունակվող անորոշություն,

բ/ Ցածր արտադրողական աշխատանք, երկար փողերի բացակայություն:

գ/ 4 սահմանափակումներ, որոնց զսպում են երկարաժամկետ և կայուն տնտեսական աճը՝

1. Մարդկային կապիտալի ցածր որակ: Քանակական առումով Հայաստանը կրթված մարդկանց պակաս չունի: Աշխատուժի հետ կապված խնդիրներն արմատապես կապված են որակի հետ: Տնտեսության կողմից պահանջվող և ներկայիս կրթական համակարգի կողմից փաստացի առաջարկվող աշխատուժի որակների միջև էական ճեղքվածք կա:

2. Անկատար մրցակցային միջավայր: Անարդար մրցակցային դաշտը և ստվերային տնտեսությունը ստեղծում են բազմաշերտ անբարենպաստ ազդեցություններ և՛ ընկերությունների, և՛ երկրի մակարդակով: Մրցակցային դաշտի առողջացումն ու բոլոր ընկերությունների համար հավասար դաշտի ստեղծումը կխթանեն Հայաստանում ձեռներեցության զարգացումը:

3. Հնարավորությունների բացահայտման պակաս: Հայաստանի աճի հեռանկարներն անխուսափելիորեն կապված են արտահանման հետ: Արտահանման և ներդրումների ներկա կառուցվածքը չեն նպաստում արտահանման նոր հնարավորությունների բացահայտմանը և նորարարությունների խթանմանը: Արդյունավետ արդյունաբերական քաղաքականությունը պետք է միտված լինի նմանատիպ հնարավորությունների ստեղծմանը:

4. Միաչափ ֆինանսական համակարգ: Աճի հիմնական խոչընդոտը ֆինանսական համակարգի միակողմանիությունն է: Վերջինս թույլ չի տալիս ունենալ տնտեսության տարբեր հատվածների կարիքներին հարմարեցված բազմատեսակ գործիքներ: Տնտեսության աճը սպասարկելու համար անհրաժեշտ է ունենալ արդյունավետ և դիվերսիֆիկացված ֆինանսական համակարգ:

Ի ն չ պ ե տ ք է ա ն ե լ

Տնտեսական հեղափոխությունը և նրա հաջողությունն ամբողջովին պայմանավորված են լինելու վարքագծային վերափոխումներով: Վերջինիս իրականացումը նախատեսում և պահանջում է համապատասխան պայմաններ: Նախ՝

- օր առաջ պետք է մոռացության մատնվեն անցյալի կառավարման ինստիտուտները՝ բովանդակային առումով,

- երկրորդ, կարիք կա կանոնակարգելու նոր գաղափարախոսության հիմնադրույթները,

- պահանաջները,

- երրորդ, հրատապ անհրաժեշտություն կա, հստակ ձևակերպելուց զատ, տնտեսական կյանքի մասնակիցներին տեղ հասցնել նոր սկզբունքները, կանոնակարգերը,

- չորրորդ, պետք է առանց հապաղելու սկսել նոր ինստիտուտների՝ նոր իրենց էությամբ և բովանդակությամբ, ձևավորման գործընթացները:

Կառավարությունն ու ԿԲ-ն պետք է անցնեն նոր տնտեսական քաղաքականության. առաջարկի խրախուսման հիման վրա: Պետք է խրախուսել ներդրումները: Դրանք այլևս պետք է կրեն մասսայական բնույթ և ոչ թե լինեն կառավարության ու առանձին մեծահարուստ գործարարների պայմանավորվածության արդյունք: Ներդրումներ ասելով մենք հասկանում ենք իրավաբանական և ֆիզիկական անձանց ծախսերը հիմնական կապիտալի տարրերի, բիզնեսի նոր տեսակների համար շրջանառու միջոցների ձևավորման, տեխնոլոգիաների ձեռք բերման և աշխատակիցների կրթության բարձրացման կապակցությամբ: Համաձայն առանձին մասնագիտական վերլուծությունների տնտեսական զարգացման մեր մակարդակի դեպքում պետք է հիշել, որ ՀՆԱ նկատմամբ 10% ներդրումներն ի վիճակի են ապահովել ավելացված արժեքի աճ 3%-ի չափով: Երկնիշ տնտեսական աճի համար ներդրումները պետք է կազմեն ՀՆԱ 30%-ը:

Խոսքն այնպիսի տնտեսական աճի մասին է, ուր կա ավելացված արժեք և հարակից ոլորտների աճ:

Հիշեցման կարգով, ներկայումս զարգացած երկրները միջին հաշվով սպառում են ՀՆԱ 75%-ը, ներդնում՝ 25-ը: Միջին զարգացած երկրները բաժանվում են 3 խմբի: Առաջ ընկածներն ներդնում են այնքան, ինչքան սպառում են (Չինաստան), «միջին» միջինները գտնվում են 75/25 հարաբերության մեջ (Բելառուս), իսկ հետամնաց միջինները (Ուկրաինա, Վրաստան, Հայաստան) սպառում են ՀՆԱ-ի 88-95%-ը: Աղքատ երկրներում, որպես կանոն, սպառումը հավասար է կամ նույնիսկ մեծ է ՀՆԱ-ից: Ժամանակակից ներդրումային տնտեսական քաղաքականության պայմաններում ներդրումները հիմնվում են ոչ թե օրենքների, այլ ինստիտուտների վրա: Արևմուտքում լայն տարածում են գտել այնպիսի ներդրումային ինստիտուտներ (փոխադարձ հիմնադրամներ, ներդրումային գրասենյակներ, դրամական շուկայի փոխադարձ ֆոնդեր, կուտակային կենսաթոշակներ), որոնց պարագայում մարդը ներդրում կատարելով սպառում է և սպառելով ներդրում է: Սրանք ներդրումային վարքի յուրահատուկ ինստիտուտներ են, ուր բարեհաջող լուծում է գտնում ներդրումների և սպառման միջև առկա հավերժական հակասությունը: Կարիք կա օրենսդրորեն սահմանել ներդրումներ հասկացությունը: Ունիվերսալ բանկային համակարգից անցնել մասնագիտացված (ըստ գործունեության ոլորտների ու ճյուղերի) բանկային համակարգի: Պետական արժեթղթերի վաճառքը քաղաքացիներին, անհատներին (ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս) իրականացնել ինչպես բանկերի միջոցով, այնպես էլ անմիջականորեն: Գործարկել ՀՀ ֆոնդային բորսան: Վերացնել սահմանի վրա ԱԱՀ գանձելու պրակտիկան: Սա ներդրողների համար կհանգեցնի հարկային բեռի հավասարաչափ բաշխմանը ժամանակի մեջ: Մտցնել եկամուտների և գույքի համատարած հայտարարագրում բոլորի համար: Հետայսու բացառել արտաքին փոխառությունների ու վարկերի հաշվին սպառմանն ուղղված միջոցառումների, վերանորոգումների, շրջանառու միջոցների համալրման և այլն ֆինանսավորումը: Պետության կողմից կամ պետական երաշխիքների հաշվին

արտաքին պարտքի ավելացումը բացառապես թույլատրել միայն նոր հիմնական կապիտալի տարրերի ֆինանսավորման և/կամ տեխնոլոգիաների տրանսֆերտի դեպքերում:

Արտապատվիրել՝ աութսորս անել - հնարավորիս շատ պետական ծառայություններ, օրինակ, ջրային ռեսուրսների կառավարումը, ֆինանսական վերահսկողությունը:

Ընդունել Հայաստանի Հանրապետության օրենքը պետություն-մասնավոր գործընկերության մասին:

Առաջարկներ ուղղված միջազգային կառույցներին՝ ՀԲ, Արժույթի Միջազգային Հիմնադրամ

Բարեփոխումների, տնտեսական հեղափոխության իրականացման մարտավարության, քայլերի հերթականության մշակում: Այդ նպատակով անհրաժեշտ է՝

ա/ ինստիտուցիոնալ բարեփոխումների աջակցում,

բ/ ենթակառուցվածքների ֆինանսավորում և կառավարման փորձի աջակցություն:

Կառուցվածքային Բարեփոխումների իրականացում, մասնավորապես՝

գ/ կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության կառավարման արմատական փոփոխության աջակցություն,

դ/ գյուղատնտեսության կառավարման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների կիրառման աջակցություն,

զ/ Էներգետիկայի զարգացման նոր ռազմավարության մշակման աջակցություն:

Մեկ անգամ ևս շեշտելով տնտեսական բարեփոխումների կարևորությունը, առանձնացնենք տնտեսության կառավարման նոր գործիքակազմ ունենալու անհրաժեշտության հանգամանքը: Այս առումով տնտեսության պետական

կարգավորման հիմնադիր, բոլոր ժամանակների ականավոր տնտեսագետներից մեկը՝ Ջոն Մեյնարդ Բեյնսը, գրել է հետևյալը. «Տնտեսագիտությունն անմիջապես տնտեսական քաղաքականության մեջ կիրառվող արդեն պատրաստի եզրակացությունների հավաքածու չէ: Այն, ավելի շուտ, մեղոթ է, քան ուսմունք, ինտելեկտուալ գործիք, տեխնիկա՝ օգնելու նրան, ով տիրապետում է դրան, հանգելու ճիշտ եզրակացությունների»:

ՀԳ.

Տնտեսական հեղափոխությունն իրականացնելու հաջողության նախապայմաններից շատ կարևոր է, որ այն ընկալվի մարդկանց կողմից: Շատ բարեփոխումներ իրենց նպատակին չեն հասել հենց այն պատճառով, որ մարդկանց չի ներկայացվել իրականացվող քայլերի նշանակությունը, դրանց բովանդակային և կիրառական մանրամասները: Դրա մասին կարող ենք կարդալ Ռուսաստանի բարեփոխիչներ Ա.Կոխի, Պ.Ավենի «Գայդարի Հեղափոխությունը»¹ գրքում, ինչպես նաև հայտնի տնտեսագետ Սերգեյ Գուրիևի հարցազրույցում²:

Այս առումով բավականի հետաքրքիր ուսումնասիրություն է իրականացրել Համաշխարհային Բանկը, որն ըստ մեզ շատ համահունչ է այսօրվա Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին և խիստ արդիական է:

Անդրադառնալով ընդհանրապես բարեփոխումներին և դրանց իրականացման հաջողությունների խնդրին Համաշխարհային Բանկը նշում է, որ բարեփոխումները պետք չէ գաղտնի իրականացնել՝ թափանցիկության գործոնը կարևոր դեր է խաղում դրանց իրականացման հաջողվածության մեջ: Այս մասին ասված է «Բարեփոխումների քաղաքատնտեսություն» զեկույցում, որը մշակվել է բանկի զարգացման հետազոտական խմբի ավագ տնտեսագետ Ստուտի Քեմանիի կողմից³: Չեկույցում

¹ Авен, Кох: “Революция Гайдара: История реформ 90-х из первых рук “ , Альпина Паблишер, 2015 г. Стр: 471

² Сергей Гуриев: «Все счастливые страны счастливы одинаково», 9 ноября, 2016, slon.ru

³ Political Economy of Reform , Stuti Khemani, Development Research Group Macroeconomics and Growth Team October 2017, WB

մասնավորապես նշված է, որ ցանկացած հասարակություն կարող է «թաղվել» զարգացման ցածր մակարդակի վրա, չնայած այն բանին, որ մարդիկ ակնհայտորեն տեսնում են փոփոխության հրատապության անհրաժեշտությունը, և այդ հակասության պատճառը քաղաքացիների տարբեր տեսակետներն են առկա խնդիրների առնչությամբ: Որպեսզի այդ հարցը իր լուծումը ստանա ըստ Համաշխարհային Բանկի կան չորս կարևոր գործոններ, որոնց վրա քաղաքական էլիտաները բարեփոխումներ իրականացնելիս պետք է հենվեն:

Առաջին գործոնը - Բարեփոխումները, ամենայն հավանականությամբ, հաջող կլինեն, եթե իրապես բարեփոխում լինեն: Դրանք մեծ առավելություններ կտան թանկարժեք ստատուս-քվոյի պահպանման համեմատ: Քաղաքականության կամ ինստիտուտների ամեն մի փոփոխություն չարժեք բարեփոխում անվանել:

Երկրորդ գործոնը, որից կախված է բարեփոխումների հաջողությունը, բարեփոխումների ընդարձակ հիմնավորումն է: Բարեփոխման նախաձեռնողները պետք է տեխնիկական ապացույցներ ունենան, որոնք ապագադափարականացված և անկողմնակալ կլինեն: Էլիտաները պետք է ցույց տան բնակչությանը, թե որքան անօգուտ է ստատուս-քվոն և ինչ դրական փոփոխություններ կբերեն բարեփոխումները: Այս հարցում կարող են օգնել անկախ վերլուծական ու հետազոտական հեղինակավոր կենտրոնները:

Երրորդ գործոնը, եթե այս երկու կետերը պահպանվում են, բարեփոխումների խոչընդոտ է դառնում վնասը, որը հասցվում է որոշակի խմբերին: Իշխանությունը նրանց պետք է խոստանա կիսվել բարեփոխումների դրական արդյունքներով, որպեսզի նրանք չխանգարեն: Սակայն փոխհատուցումը կարող է շատ մեծ լինել և հնարավոր չլինի իրականացնել դա: Այդ դեպքում պարտվող խմբերը կարող են փորձել համոզել քաղաքացիներին, որ փոփոխությունները նրանց շահից էլ չեն բխում կամ էլ գիտակցաբար այնպիսի տնտեսական քաղաքականություն վարեն, որ հասարակությանը վնաս հասցվի: Այդ պատճառով պետությունը պետք է կենտրոնանա նաև երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոփոխությունների վրա, որ

թուլացնի դժգոհ լոբբիստների ազդեցությունը:

Ի վերջո, Համաշխարհային Բանկի վերջին խորհուրդը վերաբերում է այն իրավիճակին, երբ բարեփոխումներին խանգարում են պոպուլիստական պահանջները կամ էլ պարտվող խմբերի տարածած սխալ տեղեկությունները: Այդ դեպքում քաղաքական գործիչները պետք է փոփոխությունների անհրաժեշտության որակյալ ապացույցներ ներկայացնեն: